անդամքն են պարոնայք Պօղոս Խաչատրեան, Մկրտիչ Մատինեանց, Մարտիրոս Յովսէփեան և Սիմէօն Յովակիմեան։

Յուսով եմք՝ զի յիշեալ բարեպաշտ անձինք պիտի յաջողին անձնանուէր սիրով պահել ըստ արժանւոյն իւրեանց ստանձնեալ կարևոր և մեծ պաշտօնը։

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒՔ

### Ի ԴՈՒՐԱՅ

Դուրայ քաղաքի նորահաստատ Հոգևոր դպրոցին կառավարութեան համար ըստ առաջարկութեան Գերապատիւ և Ուսումնասէր Հոգևոր—Տեսչին Շամախւոյ՝ Սրբազան Անդրէաս Արքեպիսկոպոսի և ըստ ընտրութեան Դուրայնակ մերազնեայ հասարակութեան՝ հետևեալ պարոնայք Պետրոս Ղազարեանց, Կարապետ Տէր Սարգսեանց, Յարութիւն Նազարեանց, Պօղոս Ալէքսանեանց, Մարգար Դասապեանց և Ներսէս Սարումեանց Հոգաբարձութեան պաշտօնին մէջ հաստատեցան Վեհ. Կաթողիկոսի օրհնութեան Կոնդակաւ։

Յիշեալ պարոնայից այս նոր և վսեմ պաշտօնը շնորհաւորելով կը բարեմաղթեմք կարողութիւն և յաջողութիւն յօգուտ և ի դաստիարակութիւն Հայ մանկտւոյն Դուրայու։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ

(Շարունակութիւն.)

### Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ:

| | Ռ. |
|---|---|
| Մկրտիչ Մուրատեանց . . . | 5 |
| Մկրտիչ Խաչկուղեանց . . . | 3 |
| Ղազարոս Ախչեան . . . . | 3 |
| Առաքել Մկրտիչեան . . . . | 3 |
| Գէորգ Ակոպեան . . . . | 2 |
| Գաբրիէլ Քէքէջեան . . . | 1 |
| Աստուածատուր Թանայեան . . . | 2 |
| Քրիստոսատուր Քրիստոյեան . . . | 3 |
| Զաքար Մարտիրոսեան Զախարեանց . | 1 |
| Մարտիրոս Քօմուրճեան . . . | 1 |
| Խաչատուր Քէչիճեան . . . | 3 |
| Ստեփաննոս Տէր Մարտիրոսեան Փափեան . | 1 |
| Դանիէլ Քէչիճեան . . . | 2 |
| Գրիգոր Խլեպնիկեան . . . | 1 |
| Լուսեղէն Բօբեան . . . . | 1 |
| Գասպար Խաչատուրեան Թորոսեանց . | 2 |
| Վահան Քէլեշեան . . . . | 1 |
| Աստուածատուր Սալթիքեան . . | 2 |
| Մարիամ Հալաճեան . . . | 2 |
| Թագուհի Հալաճեան . . . | 1 |
| Գեղեցիկ Հալաճեան . . . . | 1 |
| Բերութէ Շմաւոնեան . . . | 1 |
| Մարիամ Հալաճեան . . . | 1 |
| Թորոս Թումանեան . . . | 1 |
| Դալիանէ Խաչէ . . . . . | 1 |
| Յովակիմ Գէորգեան Սարըյեանց և | |
| Դալիանէ Կարապետեան . . . | 1 |
| Մկրտիչ Մելքոնեան . . . | 1 |
| Մահտեսի Կարապետ Քլթեան . . | 1 |
| Հաճի Տիրուհի . . . . | 1 |
| Լուսիկ Լուսպարոն Մալեան . . . | 1 |
| Համբարձում Քավալէվեան . . | 1 |
| Լուսիկ Բալուչքայեան . . . | 1 |
| Ստեփան Օհանէսեան Ցիլինեանց . . | 2 |
| Հոփսիմէ Ցիլինեանց . . . | 2 |
| Ստեփաննոս Նատալեանց . . . | 3 |
| Յոհանէս Քառօթքովեանց . . . | 1 |
| Եւայ Տէր Անդրէասեան . . . | 2 |
| Կարապետ Յարութիւնեան . . . | 1 |
| Նիկողոս Մանուէլ Խասապեան . . | 1 |
| Խաչատուր Չալըխեան , . . . | 1 |
| Պարոն Պարոնեան . . . . | 1 |
| Պետրոս Խումաճեանց . . . . | 5 |
| Պօղոս Խումաճեանց . . . . | 5 |
| Յարութիւն Խնձորեանց . . . | 5 |
| Պարոն Պաղրեանց . . . . | 3 |
| Լուսեղէն Արծրունեանց . . . | 5 |
| Յովակիմ Խարակիւլեանց . . . | 3 |
| Խաչատուր Շուշոսեանց . . . | 1 |
| Մարիամ Մովսէսեանց Չորչոփեանց. . | 2 |

| | |
|---|---|
| Սարգիս Թորոսեան Ոսկերչեանց | 2 |
| Լուսպարոն Լուսեղէնեան Աստնեանց | 1 |
| Սերովբէ Զորչափեանց | 10 |
| Խաչատուր Խարակլըլեանց | 3 |
| Գէորգ Ակաչանեանց | 1 |
| Միքայէլ Տրապիզոնեանց | 6 |
| Միքայէլ Զոռնեանց | 2 |
| Յովհաննէս Սրմագէշեանց | 2 |
| Վարդերէս Սրմագէշեանց | 2 |
| Սերովբէ Թիլթոեանց | 1 |
| Յովակիմ Թիլթոեանց | 1 |
| Քերովբէ Զաւխեանց | 2 |
| Յակովբ Օպերեանց | 3 |
| Աստուածատուր Օպերեանց | 3 |
| Եպիփան Պոպոյեանց | 3 |
| Պշխուհի Յարութիւնեան | 2 |
| Հեղինէ Զափռաստեան | 2 |
| Մինաս Խալիպեանց | 3 |
| Խաչատուր Սրմագէշեան | 2 |
| Վարդան Թիլթոեանց | 2 |
| Դաւիթ Մուրատեան | 1 |
| Գրիգոր Ասմայեան | 2 |
| Կարապետ Լոյսպարոնեան Մալիեանց | 3 |
| Խաչատուր Զաքըյեանց | 2 |
| Սարգիս Խոճեանց | 2 |
| Պետրոս Խոճայեանց | 1 |
| Յակոբ Քափէնիքեանց | 1 |
| Յովակիմ Խոճայեանց | 2 |
| Մինաս Այրամեանց | 1 |
| Նիկողայոս Կոզատեան | 2 |
| Արզար Կոզատեան | 1 |
| Աւագ Պախալեան | 1 |
| Եղիա Եղիազարեան | 1 |
| Յովհաննէս Խալբախճեան | 2 |
| Սիմէօն Օտամանեանց | 1 |
| Մանուկ Տրապիզոնցեան | 2 |
| Գաբրիէլ Տրապիզոնցեան | 3 |
| Յարութիւն Խոճայեան | 1 |
| Դանիէլ Սախայեանց | 2 |
| Կարապետ Ասմայեանց | 1 |

(Շարունակելի)

## Խոճագրո–Նեան Արջարաթ տմատգրոյ.

Արդարև իմ քրիստոնէական պարտաւորութիւնն և երիտասարդական աշխոյժ ազգասիրական հոգիս դադար չի տալիս երբէք ինձ այս տեղ ափ ի բերան լինելոյ, այլ կարող եմ համարձակապէս ի լուր կարդալ իմ սիրելի հնաւոր և մերձաւոր ազգայնոց ականջի մէջ պատուական Լրագրիդ միջոցաւ այն լուրերը, որոնք յատկապէս ուրախութիւն կ'առթէին նոցա սրտից մէջ և պարծանք. որոնցից մէկ և այս։

Նուխույ գաւառի Այրինբուլաղ գիւղացի Գասպար Յովհաննէսեան իւր մանկութեան ժամանակումն դառն աղքատութեան երեսէն իւրեանց գիւղի մերձակայ Դաշաղջի անուն Տաճկաց (Թուրքերի) գիւղի Աֆենդի մօտ տարեկան ռոճկով ծառայում է քանի մի տարիներ. այս միջոցի մէջ յիշեալ Աֆենդին ջան ի գործ դրած ցայգ և ցերեկ սկսում է ընդ դէմ մեր ուղղափառ եկեղեցոյն այս տղային քարոզել, և զանազան տեսակ հնարքներով որսալ սորա միտքը հաւատափոխութեան նպատակաւ, մինչև այն աստիճան, որ այնպիսի պատուով ընդունում է սորան ոչ որպէս ծառայ, այլ որպէս հարազատ որդի հոգալով առատաձեռն ամենայն նորան և ¦ ծնողաց պակասութիւնները ըստ նիւթականին. նա և փոքր ի շատէ Տաճկերէն կարդացնում. որոյ մոլորական քարոզութեանը հետևելով սոյն սա Գասպար Յովհաննէսեանն՝ սկսում է ծնողներից և բարեկամներից առանձին իմն եղանակաւ ընդունել Մահմետական կրօնը՝ և կատարել ըստ ամենայնի կրօնի պատկանեալ ծեսէրը և արարողութիւնները միանգամայն։ Բաց յայսմանէ յետ քանի մի ամաց թելադրութեամբ և յորդորանօք եւս յիշեալ Աֆենդիի փախստական լինելով | գնում է հարաւային կողմն Լէհաստանի Խնով կոչեցեալ նահանգն, և անդ սկսում մէկ գիւղի մէջ՝ նոր ի նորոյ հաստատել նոցա կրօնի մէջ ուրանալով միանգամայն քրիստոնէական եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնն՝ և թլփատուած լինում սպասաւոր նոցա մզկիթին։

Զկնի այսքան ժամանակաց ՝ճշմարտապէս լսելով նորա մոլորութիւնն ազգականներն յիշեալ մոլոր Գասպար Յովհաննէսեանի՝ դիմելով առ